# «ՋիԷՆՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ

## Ֆինանսական հաշվետվություններ
## 2011թ. դեկտեմբերի 31-ին
## ավարտված տարվա համար

## Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 5 |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 6 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 7 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 8 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն | 9 |

KPMG

**KPMG Armenia cjsc**
8th floor, Erebuni Plaza Business Center
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

**Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա ՓԲԸ**
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՋիԷՆՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՋիԷՆՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ -ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2011թ. և հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և
KPMG Europe LLP-ի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, շվեյցարական KPMG
International Cooperative ("KPMG International") կոոպերատիվի
անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

*Այլ նշում*

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համադրելի տվյալները աուդիտի չեն ենթարկվել:

Էնդրյու Քոքշել
Տնօրեն

Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

KPMG Armenia cjsc

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
24 մայիսի 2012թ.

| հազ. դրամ | Ծնթզ. | 2011թ. | 2010թ. Առդիտ չանցած |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 10 | 4,961,065 | 3,560,266 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 13,301 | 1,119 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 11 | 361,083 | 219,696 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | | 849 | 54,571 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | 5,336,298 | 3,835,652 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | | 53,368 | 5,548 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 12 | 454,275 | 265,901 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 | 23,947 | 135,597 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **531,590** | **407,046** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **5,867,888** | **4,242,698** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **Սեփական կապիտալ** | 14 | | |
| Բաժնետիրական կապիտալ | | 1,000,000 | 484,281 |
| Չբաշխված շահույթ | | 25,034 | 53,064 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | 1,025,034 | 537,345 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Հետաձգված եկամուտ և ստացված կանխավճարներ, ոչ ընթացիկ մաս | 15 | 3,377,476 | 1,535,732 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | 3,377,476 | 1,535,732 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Հետաձգված եկամուտ և ստացված կանխավճարներ, ընթացիկ մաս | 15 | 403,124 | 759,061 |
| Վարկեր և փոխառություններ | 16 | 192,942 | 552,312 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 17 | 611,291 | 542,003 |
| Վճարվելիք շահաբաժիններ | | - | 264,843 |
| Ընթացիկ հարկային պարտավորություներ | | 258,021 | 51,402 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | 1,465,378 | 2,169,621 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | 4,842,854 | 3,705,353 |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | 5,867,888 | 4,242,698 |



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| **հազ. դրամ** | **Ծնթգ.** | **2011թ.** | **2010թ.** |
|---|---|---|---|
| | | | Ասդիտ չանցած |
| Հասույթ | 6 | 3,540,985 | 2,637,007 |
| Ձեռքբերված ինտերնետային տրաֆիկ | | (1,160,615) | (804,672) |
| Ցանցային ենթակառուցվածքների վարձակալություն | | (176,412) | (34,540) |
| Վաճառված մուտ մանրաթելի ինքնարժեք | | (88,099) | (156,046) |
| Աշխատավարձ և աշխատակիցների այլ հատուցումներ | | (211,030) | (154,986) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (331,434) | (166,656) |
| Վերանորոգման և պահպանման ծառայություններ | | (55,212) | (88,054) |
| Այլ գործառնական ծախսեր | 7 | (127,964) | (154,944) |
| Այլ գործառնական եկամուտ | | 285 | 3,240 |
| **Գործառնական գործունեության արդյունքները** | | **1,390,504** | **1,080,349** |
| Ֆինանսական եկամուտ | 8 | 4,356 | 6,243 |
| Ֆինանսական ծախսեր | 8 | (69,890) | (63,584) |
| **Զուտ ֆինանսական ծախսեր** | | **(65,534)** | **(57,341)** |
| **Շահույթ նախքան շահութահարկով հարկումը** | | **1,324,970** | **1,023,008** |
| Շահութահարկի գծով ծախս | 9 | (275,532) | (207,378) |
| **Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | **1,049,438** | **815,630** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2012թ. մայիսի 24-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Ֆարամազյան
Գլխավոր տնօրեն

Կարինե Կարապետյան
Ֆինանսական տնօրեն



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Չբաշխված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2010թ. (աուդիտ չանցած) | 100 | 205,615 | 205,715 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | | |
| Շահույթ տարվա համար (աուդիտ չանցած) | - | 815,630 | 815,630 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար (աուդիտ չանցած)** | **-** | **815,630** | **815,630** |
| **Գործարքներ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | |
| Թողարկված բաժնետոմսեր (աուդիտ չանցած) | 484,181 | (484,181) | - |
| Շահաբաժիններ բաժնետերերին (աուդիտ չանցած) | | (484,000) | (484,000) |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում (աուդիտ չանցած)** | **484,181** | **(968,181)** | **(484,000)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ. (աուդիտ չանցած)** | **484,281** | **53,064** | **537,345** |
| Մնացորդը առ 1 հունվարի 2011թ. (աուդիտ չանցած) | 484,281 | 53,064 | 537,345 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | | |
| Շահույթ տարվա համար | - | 1,049,438 | 1,049,438 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **-** | **1,049,438** | **1,049,438** |
| **Գործարքներ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | | | |
| Թողարկված բաժնետոմսեր | 515,719 | (515,719) | - |
| Շահաբաժիններ բաժնետերերին | - | (561,749) | (561,749) |
| **Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ՝ գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում** | 515,719 | **(1,077,468)** | **(561,749)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.** | 1,000,000 | **25,034** | **1,025,034** |



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | 2011թ. | 2010թ. |
|---|---|---|
| | | Ատղիտ չանցած |
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | 4,909,634 | 2,744,831 |
| Մատակարարներին և աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (1,786,832) | (918,854) |
| **Դրամական միջոցներ գործառնական գործունեությունից** | **3,122,802** | **1,825,977** |
| Վճարված տոկոսներ | (75,124) | (13,326) |
| Վճարված շահութահարկ | (210,300) | (374,528) |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | **2,837,378** | **1,438,123** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ստացված տոկոսներ | 4,356 | 6,243 |
| Հիմնական միջոցների զուտ ձեռքբերում | (1,795,124) | (2,208,984) |
| Տրված/մարված փոխառություններ | 320 | (1,000) |
| **Ներդրումային գործունեությունից օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(1,790,448)** | **(2,203,741)** |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Հոսքեր փոխառություններից | 730,440 | 768,204 |
| Փոխառությունների մարում | (1,059,519) | (388,896) |
| Վճարված շահաբաժիններ | (826,592) | (219,157) |
| **Ֆինանսավորման գործունեությամբ(օգտագործված)/ ստացված դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(1,155,671)** | **160,151** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում** | **(108,741)** | **(605,467)** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (2,909) | (3,146) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի** | **135,597** | **744,210** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի** | **23,947** | **135,597** |



Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 37-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: